Առհասարակ, կառավարութիւնը իրեն կայուն չէր զգում. ժողովրդական նախարարների աչքը աւելի Թիֆլիս էր, քան Երևան: Դրանից դժգոհ էին ամենքը, որոնց Թւում և Երևանի ժողովրդականները: Հայ. Խորհրդի ժողովրդական պատգամաւորները, որոնք սկզբում ոյժ էին տալիս կառավարութեան, կամաց-կամաց կրկին անցան ընդդիմադիրների կողմը, և Խորհրդի ամբիոնը նորից դարձաւ կուսակցական կրքոտ վէճերի տեղ. կառավարութիւնը ստիպւած էր լինում՝ բան ու գործ Թողած՝ օրերով զբաղւել հարցումներով ու հարցաքննումներով և քննադատութիւններին պատասխանելով:

Նման քննադատութիւններն ու յարձակումները յուզում էին հանրային միտքը: Խորհրդարանի նիստերին ներկայ եղող հասարակութիւնը յաճախ արտայայտում էր իր դժգոհութիւնը, երբեմն նոյնիսկ անթոյլատրելի ձևերով: Այս հողի վրա, փետր. 28-ին տեղի ունեցաւ մի դէպք, որ ճակատագրական նշանակութիւն ունեցաւ Հայ. Խորհրդի համար:

Քննւում էր Սուրմալուի գաւառում զինւորական դրութիւն յայտարարելու առաջարկը: Կառավարութիւնն այդ առաջարկը պատճառաբանում էր նրանով, որ գաւառի Թուրք ազգաբնակութիւնը բացայայտ Թշնամական դիրք էր բռնել դէպի Հայաստանի պետականութիւնը, զինւած յարձակումներ էր գործում հայ բնակչութեան և պաշտօնէութեան վրա, կտրել էր ճանապարհները, մշտական վտանգի տակ էր պահում Էջմիածին—Իգդիր խճուղին և այլն: Ընդդիմադիրները, բնականաբար, դէմ էին օրինագծին: Խորհրդի նիստի միջոցին, ներկայ գտնւող ամբոխը, հաւանաբար, ո՛չ առանց որոշ պատգամաւորների դրդումի, խուժելով ժողովասրահը՝ յարձակւեց ընդդիմադիր պատգամաւորների վրա: Տեղի ունեցաւ վէճ ու կռիւ, և նիստը խանգարւեց:

Այս դէպքից յետոյ, Խորհուրդը, կարելի է ասել, կանոնաւոր աշխատանք չունեցաւ: Կուսակցութիւնները երկար բանակցութիւններից յետոյ, որոշեցին ձեռնարկել խորհրդարանի ընտրութեան. երկիրն արդէն մտնում էր բնականոն դրութեան մէջ և ժամանակն էր նշանակովի Խորհուրդը ընտրւած Խորհրդարանով փոխարինելու:

Ի վերջոյ, ապր. 27-ի նիստում, Հայ. Խորհուրդը որոշեց. «1. Խորհրդի պարապմունքները դադարեցնել մէկ ամսւայ ժամանակամիջոցով. 2. Դադարի միջոցին Խորհրդի բոլոր իրաւունքները յանձնել կառավարութեան. 3. Կառավարութեան յանձնարարել արտակարգ կարևորութիւն ունեցող դէպքում հրաւիրել Խորհրդի արտակարգ նիստ»:

Այս որոշումով փաստօրէն վերջ դրաւ Հայաստանի Խորհուրդը, որ հայոց պատմութեան ամենախռովայոյզ շրջանում հանդիսացաւ երկրի գերագոյն իշխանութիւնը: